Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Միհրան Խաչատրյան, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ

2. (կետն ուժը կորցրել է 23.03.23 N 326-Ն)

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2023 թվականի հունիսի 19-ից 23-ը, քաղ. Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն

4. Հրավիրող կողմը.

Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպություն (ICAO), Ֆրանսիայի Հանրապետության Տրանսպորտի նախարարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գուծուղման նպատակն էր մասնակցել Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության եվրոպական և հյուսիսատլանտյան տարածաշրջանի քաղաքացիական ավիացիայի գլխավոր տնօրենների 2023 թվականի հանդիպմանը, ինչպես նաև Փարիզի 54-րդ Ավիաշոուին:

6. Քննարկված թեմաները.

Հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

Թարմացումներ տրամադրվեցին ICAO-ի գործունեության վերաբերյալ՝ ուղղված միջազգային ավիացիայի երկարաժամկետ գլոբալ նպատակին: Պետություններին և կազմակերպություններին առաջարկվեց գործողություններ ձեռնարկել ICAO-ի աջակցության, կարողությունների զարգացման շրջանակներում: Քննարկվեցին ICAO-ի գործունեության վերաբերյալ առաջնային հարցերը՝ կապված ճգնաժամերին պատրաստվածության և կառավարման հետ:

Քննարկվեցին ավիացիոն անվտանգության հետ կապված հարցերը, ինչպես նաև անվտանգությանն առնչվող ոլորտներում աջակցության արդյունավետությունը

բարձրացնելու մեխանիզմները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկվեց կիբերանվտանգության հետ կապված հարցերի փաթեթը, որն առաջնային դեր ունի ժամանակակից ավիացիոն ոլորտում:

Տեղի ունեցան նախագահի և երկու փոխնախագահների ընտրությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Տեղի են ունեցել հանդիպումներ ICAO-ի եվրոպական և հյուսիսատլանտյան տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Նիկոլաս Ռալոյի հետ, որի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր՝ կապված հետագա համագործակցության և աջակցության հետ: Տեղի է ունեցել հանդիպում նաև Ֆրասիայի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ղեկավար Դամիեն Քազեի և Ֆրանսիայի Հանրապետության տրանսպորտի նախարարության համագործակցության գծով համակարգող Ժերոմ Լե Սյուրի հետ: Ընդգծվել է Հայաստանի և Ֆրանսիայի ավիացիոն իշխանությունների փոխգործության կարևորությունը և պայմանավորվածություններ են ձեռք բերվել հետագա առավել սերտ համագործակցության վերաբերյալ, մասնավորապես՝ Կոմիտեի անձնակազմի վերապատրաստումների մասին:

Առանձին հանդիպում է տեղի ունեցել Էյրբաս ընկերության ներկայացուցիչ Արտյոմ Տրդատյանի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանում Էյրբաս ընկերության կողմից բարձր տեխնոլոգիական փոքր արտադրություն հիմնելու հետ կապված հարցերը:

Հանդիպում է տեղի ունեցել նաև Վրաստանի քաղաքացիական ավիացիայի գործակալության ղեկավար Գիվի Դավիդաշվիլիի և Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչակազմի տնօրենի տեղակալ Յուստաս Ռասոմավիչիսի հետ: Նշված ղեկավարների հետ ընդգծվել է ավիացիոն ոլորտում ներկայիս համագործակցության բարձր մակարդակը, ինչպես նաև հետագա փոխգործակցության ծրագրերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կոմիտեի և այլ երկրների ավիացիոն իշխանությունների, ինչպես նաև ավիացիոն բնագավառի միջազգային կառույցների համագործակցությունն ու ոլորտի հետագա

զարգացումն ապահովելու համար առաջարկվում է նմանատիպ հանդիպումներն առավել հաճախակի դարձնել և ներգրավել Կոմիտեի մասնագետների ավելի ընդլայնված կազմ:

Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

29.06.2023թ.